# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N «ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-25/20-1»**

ք. Երևան «14» հոկտեմբերի 2025 թ.

**Վարչապետի աշխատակազմն, ի դեմս դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի**, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Բլից Մոթորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Աննա Խաչատրյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2025-2026թթ. կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1, N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1, N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1, N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն** գինը կազմում է **7 642 340 ( յոթ միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30--ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 **Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝**

**ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.**

**ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է 1-ին չափաբաժնի համար 3 840 000 (երեք միլիոն ութ հարյուր քառասուն հազար), 2-րդ չափաբաժնի համար համար՝ 3 840 000 (երեք միլիոն ութ հարյուր քառասուն հազար), 3-րդ չափաբաժնի համար՝ 3 840 000 (երեք միլիոն ութ հարյուր քառասուն հազար) և 4-րդ չափաբաժնի համար 4 320 000 (չորս միլիոն երեք հարյուր քսան հազար), ներառյալ ԱԱՀ-ն:**

**ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է. 1-ին չափաբաժնի համար 8 329 900 (ութ միլիոն երեք հարյուր քսանինը հազար ինը հարյուր), 2-րդ չափաբաժնի համար՝ 8 162 200 (ութ միլիոն հարյուր վաթսուներկու հազար երկու հարյուր), 3-րդ չափաբաժնի համար՝ 8 561 600 (ութ միլիոն հինգ հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր) և 9 414 900 (ինը միլիոն չորս հարյուր տասնչորս հազար ինը հարյուր), ներառյալ ԱԱՀ-ն:**

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից

ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15-աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 **Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:**

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «ԲԼԻՑ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ |
| ք.Երևան, Հանրապետության հրապարակ, | ք. Երևան, Լենինգրադյան 21/2 |
| Կառավարական տուն, 1 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հ/Հ 1570060108451000 |
| Հ/Հ | ՀՎՀՀ 00537395 |
| ՀՎՀՀ 02505554 | |
| ________________ (ստորագրություն) | ________________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*« 14 » հոկտեմբերի 2025 թ. կնքված*
*«ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-25/20-1» ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

<table>
<tr><th></th><th colspan="7">Ծառայության</th></tr>
<tr><th rowspan="2">հրավերով նախատեսված չափաբաժնի համարը</th><th rowspan="2">գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)</th><th rowspan="2">տեխնիկական բնութագիրը</th><th rowspan="2">չափման միավորը</th><th rowspan="2">Ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ</th><th rowspan="2">ընդհանուր քանակը</th><th colspan="2">մատուցման</th></tr>
<tr><th>հասցեն</th><th>Ժամկետը**</th></tr>
<tr><td>1</td><td>50111130/537</td><td>ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ` 5 ավտոմեքենայի համար (Համաձայն հավելված 1.1)</td><td>դրամ</td><td>1 800 000</td><td>1</td><td rowspan="4">ք. Երևան, մատակարարի կողմից նշված հասցեն</td><td rowspan="4">Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 455 օրացուցային օր , բայց ոչ ավել 2026թ. դեկտեմբերի 25-ը</td></tr>
<tr><td>2</td><td>50111130/538</td><td>ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ` 4 ավտոմեքենայի համար (Համաձայն հավելված 1.1)</td><td>դրամ</td><td>2 100 000</td><td>1</td></tr>
<tr><td>3</td><td>50111130/539</td><td>ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ` 3 ավտոմեքենայի համար (Համաձայն հավելված 1.1)</td><td>դրամ</td><td>1 800 000</td><td>1</td></tr>
<tr><td>4</td><td>50111130/540</td><td>ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ` 2 ավտոմեքենայի համար (Համաձայն հավելված 1.1)</td><td>դրամ</td><td>1 942 340</td><td>1</td></tr>
</table>

*** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով` հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*
**** Վճարումները կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:***

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ
ՀՎՀՀ 02505554

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԲԼԻՑ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ
ք. Երևան, Լենինգրադյան 21/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570060108451000
ՀՎՀՀ 00537395

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 1.1*
*« 14 » հոկտեմբերի 2025 թ. կնքված*
*«ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-25/20-1» ծածկագրով պայմանագրի*

## ԳՆԱՑՈՒՑԱԿ

**Ծառայությունների մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գներ (ՀՀ դրամ)**

| Հ/Հ | SU-1,SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | (Չափաբաժին 1) | (Չափաբաժին 2) | (Չափաբաժին 3) | (Չափաբաժին 4) |
|---|---|---|---|---|---|
| | | CHEVROLET NIVA 21230GLS **-2006թ.** X9L21230060129360 | HYUNDAI ELANTRA 1.8- **2011թ.** KMHDH41EBCU165769 | TOYOTA COROLLA 1.6 GAS- **2012թ.** JTNBV58E20J202448 | HYUNDAI SONATA 2.4- **2007թ** KMHET41CP7A371854 |
| | | **NISSAN TIIDA 1.6-2009թ.** JN1CC11DX9T000499 | HYUNDAI ELANTRA 1.8- **2011թ.** KMHDH41EBCU268838 | TOYOTA COROLLA 1.4 - **2011թ. JTNBH58E80J008496** | |
| | | **RENAULT FLUENCE 2.0-2012թ.** VF1LZBT0T47108422 | HYUNDAI ELANTRA 2.0 l- **2009թ.** KMHDU41BBAU854444 | | HUNDAI TUCSON 2.0-2008թ. KMHJN81BP8U931344 |
| | | **NISSAN TIDA 1.6 l -2008թ** JN1CC11C19T031762 | | | |
| | | **NISSAN TIDA 1.6 l -2008թ.** JN1CC13C59T027547. | **KIA CERATO 1.6-2012թ.** KNAFT411AC5962073 | TOYOTA COROLLA 1.3 - **2011թ. JTNBH58E90J008488** | |
| | **SU-1 ներառվող ծառայությունների անվանումը** | **1-ին չափաբաժին** | **2-րդ չափաբաժին** | **3-րդ չափաբաժին** | **4-րդ չափաբաժին** |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 4 | Արտացման համակարգի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 5 | Կցորդման համակարգի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 6 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 7 | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 8 | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 9 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 10 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 11 | ABS համակարգի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 13 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 14 | Թափքի վիճակի ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| 15 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 461 | 470 | 449 | 459 |
| | **ՏՍ-2 ներառվող ծառայությունների անվանումը** | | | | |
| 16 | Շարժիչի հանում տեղադրում | 23,049 | 28,228 | 26,911 | 29,825 |
| 18 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 4,610 | 5,410 | 5,831 | 5,047 |
| 19 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | 4,610 | 4,705 | 4,485 | 4,588 |
| 20 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 13,830 | 11,762 | 11,213 | 13,765 |
| 21 | Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում | 9,220 | 9,409 | 8,970 | 10,095 |
| 22 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | 13,830 | 14,114 | 13,455 | 14,683 |
| 23 | Փականի խցուկի փոխարինում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |
| 24 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում | 18,440 | 18,818 | 17,941 | 20,648 |
| 25 | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում | 2,766 | 2,823 | 2,691 | 2,753 |
| 26 | Հրիչի փոխարինում | 1,613 | 1,647 | 1,570 | 1,606 |
| 27 | Ատամնավոր փոկի փոխարինում | 16,135 | 16,937 | 16,147 | 17,436 |
| 28 | Փոկանիվի փոխարինում | 4,610 | 4,705 | 4,485 | 4,588 |
| 29 | Ձգող հոլովակի փոխարինում | 6,915 | 7,057 | 6,728 | 6,883 |
| 30 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 5,532 | 5,646 | 5,382 | 6,883 |
| 31 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 20,745 | 21,171 | 20,183 | 22,942 |
| 32 | Մխոցային օղակների փոխարինում | 20,745 | 21,171 | 20,183 | 22,025 |
| 33 | Թափանիվի հանում և տեղադրում | 16,135 | 14,114 | 13,455 | 14,683 |
| | **2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | |
| 34 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 461 | 470 | 449 | 459 |
| 35 | Յուղի պոմպի փոխարինում | 11,525 | 11,762 | 11,213 | 11,471 |
| 36 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 16,135 | 15,055 | 14,352 | 16,060 |
| 37 | Բռնկման կարգավորում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 38 | CO կարգավորում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |
| 39 | Օդի զտիչի փոխարինում | 461 | 470 | 449 | 459 |
| 40 | Սրահի զտիչի փոխարինում | 922 | 941 | 897 | 918 |
| 41 | Ինժեկտորի ֆորսունկայի փոխարինում | 3,227 | 3,293 | 3,140 | 3,212 |
| 42 | Ինժեկտորի ֆորսունկայի մաքրում | 3,227 | 3,293 | 3,140 | 3,212 |
| 43 | Վառելիքիմղիչի փոխարինում | 5,993 | 6,116 | 5,831 | 5,965 |
| 44 | Վառելիքի զտիչի փոխարինում | 4,610 | 4705 | 5,382 | 5,506 |
| 45 | վառելիքի բաքի հանում և տեղադրում | 4,610 | 4,705 | 4,485 | 4,588 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | | |
| 46 | Հովհարի փոկի հանում և տեղադրում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |
| 47 | Հովհարի հանում և տեղադրում | 5,532 | 6,586 | 5,382 | 6,424 |
| 48 | Ռադիատորի հանում և տեղադրում | 4,610 | 4,705 | 4,485 | 4,588 |
| 49 | Ռադիատորի վերանորոգում | 16,135 | 15,525 | 15,698 | 18,354 |
| 50 | Թերմոստատի փոխարինում | 4,610 | 5,175 | 4,485 | 5,506 |
| 51 | Ջրի պոմպի փոխարինում | 4,610 | 3,764 | 3,588 | 5,047 |
| 52 | Ընդարձակող բաքի փոխարինում | 3,688 | 3,764 | 3,588 | 3,671 |
| 53 | Խլարարի հանում և տեղադրում | 4,610 | 4,705 | 4,485 | 5,047 |
| 54 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 1,844 | 1,882 | 1,794 | 1,835 |
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | |
| 55 | Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում | 6,915 | 7,057 | 6,728 | 6,883 |
| 56 | Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում | 6,915 | 8,468 | 8,073 | 9,177 |
| 57 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 9,220 | 9,409 | 8,970 | 9,177 |
| 58 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում | 4,610 | 4,705 | 4,485 | 6,883 |
| 59 | Վազքաչափի շարժաբերի փոխարինում | 461 | 470 | 449 | 459 |
| 60 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում | 13,830 | 14,114 | 14,352 | 16,060 |
| 61 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում | 11,525 | 11,762 | 8,970 | 13,765 |
| 62 | ԱՓՏ-ի հանում և | 14,752 | 14,114 | 13,455 | 16,060 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | տեղադրում | | | | |
| 63 | ԱՓՏ-ի վերանորոգում | 138,297 | 117,615 | 112,129 | **137654** |
| 64 | ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում | 9,220 | 8,468 | 8,073 | 9,177 |
| | **5. Առջևի և հետևի կամրջակներ** | | | | |
| 65 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում | 16,135 | 14,114 | 13,455 | 15,142 |
| 66 | Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում | 12,908 | 16,466 | 15,698 | 16,060 |
| 67 | Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում | 6,915 | 7,057 | 6,728 | 6,883 |
| 68 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում | 8,759 | 7,057 | 6,728 | 9,177 |
| 69 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | 6,915 | 7,057 | 6,728 | 7,342 |
| | **6. Կախոց** | | | | |
| 70 | Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում | 18,440 | 16,466 | 15,698 | 20,648 |
| 71 | Տրավերսի հանում և տեղադրում | 9,220 | 9,409 | 8,970 | 9,177 |
| 72 | Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում | 4,610 | 4,705 | 4,485 | 4,588 |
| 73 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 4,610 | 4,705 | 4,485 | 4,588 |
| 74 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |
| 75 | Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |
| 76 | Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |
| 77 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |
| 78 | Զսպանակի հանում և տեղադրում | 2,766 | 2352.306975 | 2,243 | 2,753 |
| 79 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 2,766 | 2,823 | 2,691 | 2,753 |
| 80 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |
| 81 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |
| 82 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | 2,766 | 2,823 | 2,691 | 2,753 |
| 83 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 2,996 | 3,058 | 2,915 | 2,983 |
| 84 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում | 4,610 | 4,705 | 4,485 | 5,506 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 85 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 2,766 | 2,823 | 2,691 | 2,753 |
| 86 | Վերևի լծակի վռանների փոխարինում | 3,688 | 3,764 | 3,588 | 3,671 |
| 87 | Գնդե հոդակապերի փոխարինում | 3,227 | 3,293 | 3,140 | 3,212 |
| 88 | Ծայրակալների հանում և տեղադրում | 3,688 | 3,764 | 3,588 | 3,671 |
| 89 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 2,766 | 2,823 | 2,691 | 2,753 |
| 90 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |
| 91 | Հետևի կայունարարի վռանների փոխարինում | 922 | 941 | 897 | 918 |
| 92 | Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում | 691 | 706 | 673 | 688 |
| 93 | Հետևի զսպանակի փոխարինում | 2,766 | 2,823 | 2,691 | 2,753 |
| 94 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 2,766 | 2,823 | 2,691 | 2,753 |
| 95 | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում | 1,613 | 1,647 | 1,570 | 1,606 |
| 96 | Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում | 4,610 | 3,764 | 3,588 | 4,588 |
| 97 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում | 3,227 | 3,293 | 3,140 | 3,212 |
| 98 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում | 3,688 | 3,764 | 3,588 | 3,671 |
| 99 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում | 3,688 | 3,764 | 3,588 | 3,671 |
| 100 | Անվաբացքի կարգավորում | 1,383 | 1,411 | 1,346 | 1,377 |
| 101 | Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար | 1,383 | 2,352 | 2,243 | 1,377 |
| | **7.Ղեկային մեխանիզմ** | | | | |
| 104 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | 6,915 | 7,057 | 6,728 | 6,883 |
| 105 | Ղեկային կալունի վերանորոգում | 11,525 | 14,114 | 13,455 | 18,354 |
| 106 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում | 5,532 | 4,705 | 4,485 | 5,506 |
| 107 | ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում | 4,610 | 4,705 | 4,485 | 4,588 |
| 108 | Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում | 6,915 | 7,057 | 6,728 | 6,883 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 109 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում | 2,305 | 2,352 | 2,243 | 2,294 |
| 110 | Հիդրոուժեղարարի փոխրակի հանում և տեղադրում | 3,688 | 3,764 | 3,588 | 3,671 |
| 111 | ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում | 4,610 | 4,705 | 4,485 | 5,506 |
| 112 | ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում | 13,830 | 11,762 | 11,213 | 13,765 |
| | **8. Արգելակային համակարգ** | | | | |
| 113 | Գլխ.գլանի հանում և տեղադրում | 7,376 | 7,527 | 7,176 | 7,342 |
| 114 | Գլխ. գլանի վերանորոգում | 7,376 | 7,527 | 7,176 | 7,342 |
